

Քաղվածք

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 13 հունվար 2020թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2020թ. հունվարի 13-ի նիստում, քննության առնելով դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար հայտարարված բաց մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող Թ. Հ.-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, պարզեց, որ Թ. Հ.-ն, ավարտելով ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, 2014 թվականին ստացել է «մանկավարժության» մագիստրոսի աստիճան՝ «Իրավագիտություն» (մանկավարժություն) մասնագիտությամբ: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված գրության համաձայն՝ «Մանկավարժության մագիստրոս» որակավորում ունեցող շրջանավարտները համարվում են **քարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող անձիք:**

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը պարտավոր է ներկայացնել՝ **քարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ:**

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով առ այն, որ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը մերժվում է, ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետով առ այն, որ Հանձնաժողովը մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ չթույլատրելու մասին կայացնում է որոշում, ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի հավելվածի 17-րդ կետով առ այն, որ հարցազրույցին մասնակցելու թույլտվություն չտալու որոշում կայացվում է, եթե ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Թ. Հ.-ին չթույլատրել մասնակցելու դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար հայտարարված բաց մրցույթին: